պաղատ արքունի, և որքան կային ռոճկով՝ զամենայն այնպէս պակասեցոյց և զօթուրախսն նոյնպէս ջնջեաց եւ զէնկիչէրոց հինսն այնպէս կորոյս եւ իւրն ճրագ տնկեաց, արար և նոր զամենեսեան։ Եւ յերրորդում շաբաթու աւագ պահոցս փոյթ ընդ փոյթ եբեր զԽամայիլն, որ Յուլիսի ԺԵ՝ առաքեաց յամենայն Անատոլի ի թէֆթիչ վասն գողոց և աւազակաց, առաւել և ապստամբից։ Նաև յամենայն գաւառս և գեօղս, քաղաքս և աւանս և չէնս թուր և թուֆէնկ և այլ զէնս գտեալ, զամենայն առեալ յարքունիս առաքեսցէ, որ մինչ ի Յայտնութեան տօնս ՀԻՒ թուֆէնկ գրեցաւ ի ճէպէխանա արքայի։ Եւ ել գնաց մինչ ի Հալապ քաղաք և ի գաւառաց ոմանց մինչև բողոքեցին առ վէզիր ի ձեռաց նորա, զի յորժամ մի թուֆէնկ առնէր ի միոջէ, Ե զուռուշ ևս առնէր վասն վարձի առաքելոյ առ աստ։ Եւ ասացին Ըձ գլուխ և եթ ի Ղօնեայէ առաքեաց առ վէզի[ին] ի մեծամեծ Տաճկաց և տոլվաթաւորաց, որ Ճ և Բճ աղքատք նոքումբք ապրէին ի հացն, և զայլ քաղաքաց նոյնպէս իմա՛(*)։ Եւ առեալ զամենեցուն զգանձ և հանէր բաժին արքայի. և ասացին՝ ընդ ամէնն ԻՒ այր ոչ պակաս սպան ի մեծամեծ և յամենայն քաղաքաց։ Վասն որոյ ամենայն ռահք եւ ճանապարհք մինչ ի գրունս Պարսից գայլք և գառինք ընկերակից ի ճանապարհ մտանէին և ոչ վնասէին։ Այսպէս և ի կողմանս Ուռումէլոյ բնաւին անուն գողոց կարեալ և ամենեքեան սկսեալ լինել հողագործ և յարուեստ։

Ասա պատմէ՛ զխաղ և զճիրիտ արքայի որ անդ։

(*) Լուս. Եւ նոքա ևս ի նախն... մեծամեծք զօրպա... էին. զի յորժամ զկ... ի իւրեանց հեծել խնդ... էին Ի ձիաւոր ի ...ոյն ժամանէր. վ... և ոչ եթող զնոսա (կէտադրուածները դանակի տակ ինկած են)։